Ե. Բողոքում են, թէ ինչու հայերը եկեղեցւոյ մէջ խաչի նշանը և տէրունական կամ սրբոց պատկերներ են կախում, կարծելով ողորմելիքն թէ՝ յիրաւի պաշտում ենք պատկերներին՝ փոխանակ նոցա տիրոջը, բայց շատ սխալ են նոքա. պատկերները նախ՝ կենդանի կերպով յիշեցնում են ժողովրդոց՝ պատկերատիրոջ գործն ու պատմութիւնը. և երկրորդ՝ իբրեւ զարդ և պարագայք են եկեղեցւոյ. զարդ՝ որոյ համար Քրիստոս, աղքատ մսուրքի մէջ ծնած, և աղքատութեամբ մեծացած և կեանքն անցուցած Քրիստոս՝ մեր փրկագործութեան մեծ գործն սկսելուս և Նոր Ուխտը հաստատելուս՝ այն է իւր փրկարար մարմինը և արիւնը մեզ բաշխելու միջոցին՝ պահանջեց «Վերնատուն մի մեծ զարդարեալ»—Մարկ. ԺԴ. 15։ Եւ այս զարդարեալ վերնատունն էր, որոյ մէջ Հոգին Սուրբ իջաւ Առաքելոց վրայ, և շինեց նրանց «Հազարապետք Աստուածային խորհրդոց» —Ղուկ. ԻԲ. 12։ Այս վերնատունն էր, ուր Առաքեալք ամենայն կիւրակէ օրերում ժողովում էին Նոր եկեղեցւոյ կազմակերպութիւնը պատրաստելու, և Նոր հաւատացելոց հոգեւոր պէտքերը լրացնելու։ —

Այս վերնատունն էր, ուր Յակոբոս Տեառնեղբայրը մեծ Առաքեալն՝ առաջին անգամ մատոյց փրկարար պատարագն և բաշխեց հաւատացելոց, փոխադրելով Նոր Ուխտի տաճարին մէջ Հին Ուխտի տաճարին նիւթական զարդերը՝ —Կտակարանը - Աստուածաշունչը, բուրվառը, գաւազանը, շուրջառը, սաղաւարտը, Քերովբէից պատկերները, վարագոյրը, և ինչ որ կարեւոր էր, աւելացնելով և Սուրբ Խաչի նշանը, և որ ինչ կայ այժմ։

Նմանապէս փոխադրեց Յակոբոս Առաքեալը և օծման սրբալոյս օրհնեալ իւղը, որոյ պատրաստելը և գործադրելը Աստուած ինքը հրամայեց Մովսէս մարգարէին։ Կարդա՛ Ելից գրքի Լ. ամբողջ գլուխն։

Վերջապէս՝ այս վերնատունն էր Քրիստոնէից առաջին նիւթական եկեղեցին, ուր ժողովում էր հաւատացելոց բազմութիւնն և կազմում էր գինուորեալ կենդանի եկեղեցին, ըստ Առաքելոյն՝ «Դուք էք տաճար Աստուծոյ կենդանւոյ, և Հոգի